ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 16.4-րդ և 16.34-րդ կետերի պահանջները,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի 17.11.2014թ. թիվ 32/2-Ա որոշմամբ **(այսուհետ՝ Որոշում)**՝ Պալատի խորհրդի անդամ Նիկոլայ Բաղդասարյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են,

նկատի ունենալով նաև այն, որ Որոշումը Նիկոլայ Բաղդասարյանի կողմից առձեռն 18.11.2014թ. ստանալու հիմքով ուժի մեջ է մտել հաջորդ օրը, հետևաբար՝ Նիկոլայ Բաղդասարյանի՝ որպես Պալատի խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարեցված **2014թ. նոյեմբերի 19-ից**,

ի գիտություն ընդունելով Պալատի հաշվիչ հանձնաժողովի 09.03.2013թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ (237 ձայն) ստացած (16-րդ տող) փաստաբան Կարեն Հեկտորի Սարդարյանի (արտոնագիր թիվ 1091) գրավոր համաձայնությունը՝ խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Նիկոլայ Յուրիի Բաղդասարյանի լիազորությունները համարվում են դադարեցված 2014թ. նոյեմբերի 19-ից:

2. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 09.03.2013թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած փաստաբան Կարեն Հեկտորի Սարդարյանը (237 ձայն) 2014թ. նոյեմբերի 21-ից համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Նիկոլայ Բաղդասարյանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

21 նոյեմբերի 2014թ.
թիվ 404-Ա
ք. Երևան